


Թարգմանություններ հայերեն 1991-2013

*Հայերեն թարգմանությունների
ուսումնասիրություն 1991-2013 թթ.*

Արքմենիկ Նիկողոսյան

*Հեղափոխությունների մեթոդաբանություն,
տվյալների հավաքագրում և վերլուծություն –
Արքմենիկ Նիկողոսյան
Վերլուծություն IV, V գլուխների –
Աշոտ Գաբրիելյան
Հանձնարարականներ –
Արքմենիկ Նիկողոսյան և
Աշոտ Գաբրիելյան
Ուսումնասիրության մեկնաբանություն –
Արմեն Մարտիրոսյան
Թարգմանություն անգլերեն –
Նազարեթ Սեֆերյան
Սույն հրատարակությունը Next
Page Foundation-ի պաշտոնական
դեմոստրացիոն է ներկայացնում:*

This work is licensed
under a Creative Commons
Attribution-NonCommercial-ShareAlike
2.5 License



Գիրքը բաշխվում է միայն անվճար

Բովանդակություն

Ուսումնասիրության ոլորտը, նպատակը և մեթոդաբանությունը.....	4
Ներածություն.....	10
ա) Հայ թարգմանական գրականության փուլերը	10
բ) Հրատարակչական շուկայի յուրահատկությունները Հայաստանում	13
Հայերեն թարգմանություններ այլ լեզուներից՝ 1991–2013 թթ.	18
ա) Զարգացման փուլերը.....	18
բ) Թարգմանությունների լեզուն, դրանց դինամիկան	27
գ) Գրական–գեղարվեստական թարգմանությունների ընդհանուր ծավալը թարգմանական գրաարտադրանքի մեջ	48
Ռուսերեն տպագրված թարգմանությունների ներկրումը և գրաշուկայում դրանց դերը և պահանջարկը	50
Գրական թարգմանիչների սոցիալական դիրքը և աշխատանքային պայմանները	54
Հանձնարարականներ	59
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	61

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՆՊԱՏԱԿԸ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունը նվիրված է 1991-2013 թվականների ընթացքում Հայաստանում թարգմանական գործի վերլուծությանը: Նպատակն է եղած տվյալների հիման վրա ներկայացնել Հայաստանում թարգմանական գործի զարգացման միտումները, վերլուծել դինամիկան, վերհանել եղած թերությունները, առաջարկել գործնական քայլեր՝ ոլորտի զարգացման համար, հետազոտել թարգմանությունների հրատարակման միտումները, թարգմանիչների, հեղինակների, հրատարակիչների, գրական գործակալների, ֆինանսավորող մարմինների և այլ կազմակերպությունների գործնական կապերն ու նրանց ազդեցությունը թարգմանական հոսքերի վրա, ներկայացնել կոնկրետ աղյուսակներ, որոնք առարկայաբար կարտացոլեն խնդրի էությունը և կօգնեն հետագա քայլեր ձեռնարկելիս:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնված է Հայաստանում 1991-2013 թվականներն ընդգրկող թարգմանական գրականության մասին եղած տվյալների բազաների հնարավորությունների վրա: Օգտագործվել են հիմնականում Ազգային գրադարանում, Ազգային գրապալատում և այլուր առկա մատենագիտական տվյալներ, նախկինում արված վերլուծություններ և հրատարակություններ, գրքուլորտի գլխավոր շահառուների հետ հարցազրույցներ, որոնք զուգահեռվել են մեր սեփական դիտարկումների հետ:

Ուսումնասիրության մեջ առաջնորդվել ենք մատենագիտական տվյալների հավաքագրման, համեմատական վերլուծության և քննական-վերլուծական

մեթոդներով: Այս առումով պետք է հաշվի առնել նախևառաջ այն, որ Հայաստանում, տարածաշրջանային մյուս երկրների համեմատ, առկա մատենագիտական տվյալների որակը տարբեր է: Մասնավորապես, 1990-ականների ընթացքում տվյալները լիովին ամբողջական չեն:

Ճիշտ է, Հայաստանի ազգային գրապալատը 1925 թվականից հրատարակում է «Գրքի տարեգիրք» հանդեսը, որտեղ ներկայացվում են Հայաստանում լույս տեսնող գրքերի վերաբերյալ մատենագիտական ցանկեր՝ ըստ ուղղությունների, սակայն հանգամանքների բերումով Հայաստանում միայն վերջին տարիներին է, որ այդ տվյալները նաև թվայնացվում են և հասանելի են լայն շրջանակներին: Դրանք, ինչ խոսք, շատ բացեր են լրացնում և օգնում են արագ տիրապետել անհրաժեշտ տեղեկատվությանը: Ազգային գրապալատի հրապարակած տվյալներից զատ մատենագիտական հսկայածավալ ցանկեր են առկա նաև «Համահավաք գրացուցակ» էլեկտրոնային կայքում (www.armunicat.am):

Ազգային գրապալատի հրատարակությամբ մատենագիտական տվյալներ ամփոփող գիրք է հրատարակվել¹, որն առկա է նաև էլեկտրոնային տարբերակով և վերաբերում է կոնկրետ մեր ուսումնասիրության խնդրին: Սակայն տարբեր հանգամանքների բերումով այդ բոլոր մատենագիտական ցանկերն ու տվյալների բազաները հեռու են լիարժեք կամ ամբողջական լինելուց: Ինչպես նշվում է Ազգային գրապալատի

1 Տե՛ս Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն: Մատենագիտություն: (1981-2010): Մատենագիտ. /Կազմ.՝ Թ. Վ. Սինանյան և ուրիշ.: Խմբ. Մ. Ս. Հակոբջանյան, Երևան: Հայաստանի ազգ. գրապալատի հրատ, 2011: Նույնը նաև http://www.book-chamber.am/pdf/2011_targm.pdf:

պաշտոնական կայքում (www.book-chamber.am)՝ «Հանրապետությունում հրատարակչական գործունեության արդյունքները ամփոփող ժողովածուում բերված տվյալների հավաստիության ու ամբողջականության աստիճանը պայմանավորված է Հայաստանի ազգային գրապալատում մատենագիտական գրանցման, վիճակագրական հաշվառման և արխիվային պահպանության համար նախատեսված հրատարակությունների պարտադիր օրինակների ստացման ծավալով: Եվ քանի որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս փաստացի չի գործում օրենքը հրատարակությունների պարտադիր անվճար օրինակի ստացման մասին, չեն պահպանվում համապատասխան ստանդարտները հրատարակությունների ելից և թողարկման տվյալների զետեղման մասին, չի սահմանված հրատարակող սուբյեկտների կողմից իրենց արտադրանքի վերաբերյալ պարբերական հաշվետվության որևէ կառուցակարգ՝ ժողովածուում բերված տվյալները հրատարակությունների քանակի առումով թերի են ու ոչ ամբողջական և արտացոլում են լույս տեսած հրատարակչական արտադրանքի ընդհանուր ծավալի 70-75 տոկոսը: Նույն պատճառով մոտ 15-20 տոկոս գրքերի տպաքանակները և տպագրական ծավալները բերված են միջին մեծության, քանի որ այդ հրատարակությունների թողարկման տվյալներում բացակայում են տեղեկությունները տպաքանակի և տպագրական ծավալի մասին»²:

Մյուս կողմից՝ այդ տվյալներն էլ շատ վստահելի չեն և հաճախ նաև սխալաշատ են: Սա ևս ունի թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներ: Այդպես՝ հաճախ են դեպքերը, երբ մատենագիտական ցանկերում

2 Տե՛ս http://www.book-chamber.am/statistics_am.htm.

անփութության պատճառով սարդում են հանիրավի ու սխալ վերագրումներ, ասենք՝ ֆրանսիացի հեղինակի գիրքը ներկայացվում է որպես ֆրանսերենից թարգմանված, այն դեպքում, երբ գիրքը թարգմանվել է ռուսերենից, ընդ որում՝ գրքի տպագիր օրինակի վրա հենց ռուսերենից է նշված: Օրինակ՝ *Մարգո թագուհին: [Վեպ] / Ալ. Դյումա; Ֆրանս. թարգմ.՝ Դ. Եսայան; Խմբ.՝ Գ. Խաչատրյան. Երևան: Նաիրի, 1997*³: Կամ, գրքում ընդհանրապես նշված չէ, թե ո՞ր լեզվից է կատարված թարգմանությունը, բայց մատենագիտության կազմողները ենթադրաբար լրացրել են դա՝ հաշվի առնելով միայն այն հանգամանքը, թե ո՞ր երկրից կամ ո՞ր լեզվի կրող է հեղինակը: Օրինակ հետևյալ գրքի պարագայում՝ *Շաֆրանեկի ժառանգությունը: Երգիծական պարմվածքներ / Յարոսլավ Հաշեկ; Չեխ. թարգմ.՝ Ռ. Պետրոսյան, Գ. Գալստյան: Երևան, Շուշան, 1992*⁴:

Սա այն դեպքում, երբ գիրքը թարգմանվել է ռուսերենից: Բայց առավել շատ են հրատարակիչների և թարգմանիչների կողմից կատարվող չարաշահումները: Թարգմանելով գիրքը միջնորդ լեզվից, շատ դեպքերում, տարբեր նկատառումներից ելնելով՝ կամ չեն նշում, թե որ լեզվից է թարգմանված, կամ կեղծում են՝ նշելով անհրաժեշտ լեզուն:

Կան նաև հրատարակիչների անբարեխղճության կամ անգրագիտության արդյունքում առաջացած

3 Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն: Մատենագիտություն: (1981-2010): Մատենագիտ. /Կազմ.՝ Թ. Վ. Սիսանյան և ուրիշ.: Խմբ. Մ. Ա. Հակոբջանյան, Երևան: Հայաստանի ազգ. գրապալատի հրատ, 2011, էջ 158: Նույնը նաև՝ http://www.book-chamber.am/pdf/2011_targm.pdf, էջ 158:

4 Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն: Մատենագիտություն: (1981-2010): Մատենագիտ. /Կազմ.՝ Թ. Վ. Սիսանյան և ուրիշ.: Խմբ. Մ. Ա. Հակոբջանյան, Երևան: Հայաստանի ազգ. գրապալատի հրատ, 2011, էջ 89: Նույնը նաև՝ http://www.book-chamber.am/pdf/2011_targm.pdf, էջ 89:

սխալներ, որոնք հետագայում առանց քննության ենթարկվելու մեխանիկորեն անցնում են նաև մատենագիտական ցանկեր: Բերենք մեկ օրինակ՝ պատկերը հասկանալի դարձնելու համար. *Լեզուն կտրած ծիպիկը: Ճապոնական հեքիաթ /Թարգմ.՝ Հովհ. Թումանյան. Երևան: Ա. հ., 1993. [18] էջ⁵*: Այս հեքիաթը ոչ թե թարգմանություն է, այլ փոխադրություն, հետևաբար՝ չի կարող դիտարկվել թարգմանական գրականությանը վերաբերող մատենագիտական ցանկերում և ուսումնասիրություններում:

Մրանց գումարվում է և այն, որ բացահայտ թարգմանական գրքերի վրա առկա չեն ոչ մի տեսակի տվյալներ ոչ թարգմանության լեզվի, ոչ էլ թարգմանչի մասին:

Այս հանգամանքները, բնականաբար, դժվարացնում են ստույգ տվյալների տիրապետումը: Ճիշտ է, մեր հետազոտության ընթացքում վերը նշված բնույթի սխալներն ու վրիպումները հնարավորինս ճշգրտվել են, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ ուսումնասիրության մեջ բերված բոլոր վիճակագրական, աղբյուրագիտական, մատենագիտական տվյալները մոտավոր են և հետագա ճշտումների ու ճշգրտումների կարիք ունեն:

5 Տե՛ս http://armunicat.am:8991/F/G7UGQL874VPL5V41B64YA95SIQMDR9APX-QRFIN71S335NDK68U-33315?func=item-global&doc_library=ALC01&doc_number=000385609&year=&volume=&sub_library=NLA:

Ազգային գրապալատի մատենագիտական ցանկեր կազմողները քննական մոտեցում են հանդես բերել այս գրքի նկատմամբ և չեն ներառել թարգմանություններին վերաբերող իրենց մատենագիտական ցանկերում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ա) Հայ թարգմանական գրականության փուլերը

Հայ թարգմանական գրականությունը դարերի պատմությունն ունի: Արդեն 5-րդ դարում, Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի գյուտից հետո Հայաստանում սկիզբ առավ մշակութային մեծ շարժում, որի գերակա ուղղություններից մեկն էլ հենց թարգմանական գործն էր: Հետագայում այն ստացավ Թարգմանչաց շարժումը անունը: Ընդհանուր առմամբ, 5-րդ դարի առաջին կեսին կատարված թարգմանությունները կարելի է դասակարգել հետևյալ բաժինների՝ 1. Լիտուրգիկա՝ ծիսական երկեր (Խորհրդատետր-Պատարագամատույց, Ժամագիրք և այլն) 2. Պատրիստիկա՝ հայրախոսական գրականություն, 3. Մարտիրոլոգիա և հագիոգրաֆիա՝ վկայաբանություն և վարքագրություն 4. Կանոնական (եկեղեցական ժողովների և սուրբ հայրերի կողմից գրված կանոններ ու սահմանումներ) 5. Պատմական երկեր: Հայ գրերի գյուտից մինչև 440-ական թթ. ասորերենից և հունարենից թարգմանվել են մեծ քանակությամբ գործեր: Դրանցից հատկանշական են հետևյալները՝ Աստվածաշնչի թարգմանությունը (405–408-ին և 430-ական թթ.), Դիոնիսոս Թրակացու «Արուեստ քերականութեան», Պորփյուրի «Ներածություն»-ը, Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ը (416–420-ին), Եպիփան Կիպրացու «Մարգարեների վախճանի մասին», Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա արարչության մասին» աշխատությունը, Պլատոնի աշխատությունները, Արիստիդես Աթենացու «Քրիստոնեական հավատի ջատագովությունը» (420–430-ին), Եվսեբիոս Կեսարացու

«Քրոնիկոնը» (430-ական թթ.) և այլն, և այլն, ընդ որում՝ այդ թարգմանություններից շատերն այսօր բնագրի արժեք ունեն, որովհետև բուն լեզվով գրված գործերը չեն պահպանվել: Այս պատմական իրադարձությունը հետագայում ամրագրվեց հայ եկեղեցու օրացույցում՝ որպես Սուրբ Թարգմանչաց տոն: Սուրբ Թարգմանչաց տոն (ամբողջական անվանումը՝ Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց), հայ ժողովրդի ազգային-եկեղեցական տոներից է, նշվում է Սուրբ Խաչի տոնից չորրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

17-րդ դարում, Հայաստանում և հայկական տարբեր գաղթօջախներում հոգևոր մշակույթի աշխուժացմանը զուգընթաց, վերականգնվեցին Թարգմանչաց շարժման ավանդույթները:

18-րդ դարի սկզբին Մխիթար Սեբաստացու կողմից Իտալիայի Սուրբ Ղազար կղզում հիմնադրվեց Մխիթարյան միաբանությունը, որը բանասիրական տարաբնույթ աշխատանքների հետ մեկտեղ թարգմանական մեծ գործ ձեռնարկեց: Մասնավորապես՝ լատիներենից և իտալերենից թարգմանվեցին համաշխարհային գրականության բազմաթիվ գլուխգործոցներ: Ճիշտ է, այդ թարգմանությունները կատարվում էին գրաբարով, որն այդ շրջանում միայն գրավոր գործառնություն ունեցող լեզու էր:

19-րդ դարից սկսած հայ նոր գրականության զարգացմանը զուգընթաց նոր փուլ մտավ նաև հայ թարգմանական գրականությունը: Այն դիտարկվում էր որպես սեփական գրականությունը զարգացնելու, նոր թեմաներ, գաղափարներ ու ոճ ներմուծելու, համաշխարհային գրական ընթացքի հետ կապելու լավագույն միջոց: Պատմական զարգացումների բերումով՝ հայ ժողովուրդը բաժանված է արևմտահայ և արևելահայ

հատվածների, որոնցից յուրաքանչյուրը առանձնահատուկ մշակութային պայմաններում է զարգացել: Դա իր ազդեցությունն է թողել 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին հայ թարգմանական գրականության նախընտրությունների և թարգմանող լեզվի ընտրության վրա: Եթե արևելահայերենի կրողները հիմնականում թարգմանում էին ռուսերենից և գերմաներենից, ապա արևմտահայ հատվածում գերիշխում էր ֆրանսերենն ու ինչ-որ չափով նաև անգլերենը:

Խորհրդային շրջանում թարգմանական գործը ղեկավարվում էր պետության կողմից՝ հատուկ պատվերների շրջանակում: Ճիշտ այնպես, ինչպես նախկին խորհրդային հանրապետությունների մեծամասնությունում էր: Իհարկե, այդ շրջանում ևս բազմաթիվ արժեքավոր թարգմանություններ են կատարվել, սակայն որոշ հանգամանքներ մղում են, այնուամենայնիվ, ինչ-ինչ վերապահումներով մոտենալ այդ շրջանի թարգմանական գրականությանը ընդհանրության մեջ: Մասնավանդ որ՝ ձևավորված որոշ վատ ավանդույթներ դեռ այսօր էլ շարունակում են գործել: Խոսքը մասնավորապես վերաբերում է արևմտաեվրոպական և ամերիկյան մի շարք նշանավոր գրողների (Ֆրանց Կաֆկա, Հերման Հեսսե, Ուիլյամ Ֆոլկներ, և ուրիշներ) գաղափարական և այլ նկատառումներով չիրատարակելուն, և ապա՝ թարգմանությունների զգալի մասը միջնորդ լեզվից՝ հիմնականում ռուսերենից կատարելը:

1991 թվականից, այսինքն՝ Հայաստանի անկախացումից հետո հայ թարգմանական գրականությունը ձևավորում է նոր փուլ, որն ունի իր հատկանշական կողմերը, և որոնց էլ նվիրված է մեր այս ուսումնասիրությունը:

բ) Հրատարակչական շուկայի յուրահատկությունները Հայաստանում

Անկախության շրջանում նոր հասարակարգի ձևավորման զուգահեռ էականորեն փոխվեց նաև հրատարակչական շուկան: Եթե խորհրդային շրջանում հրատարակչական շուկան միով բանիվ պայմանավորված էր պետական քարոզչությամբ ու պետական պատվերով, այսինքն՝ ամբողջովին կուսակցական վերահսկողությամբ, ապա Արցախյան շարժման հենց սկզբից, առավելապես նույնպես քարոզչական նպատակներով, ի հայտ եկավ ինքնահրատ մամուլը, ինչպես նաև սկսեցին հրատարակվել նոր՝ ազգային-ազատագրական պայքարի քարոզչությունն իրականացնող գրքույկներ, թռուցիկներ և այլն:

Անկախության շրջանում ի հայտ եկան մի շարք նոր հրատարակչություններ, որոնք իրենց առաջ նոր խնդիր էին դրել: Թարգմանության առումով հատկապես մեծ անելիք կար: Խորհրդային շրջանում շատ գրքերի թարգմանությունը, եթե չէր էլ արգելվել, ապա խոչընդոտվել էր՝ նախապատվությունը տալով այլ ստեղծագործությունների: Անկախության առաջին տարիներին, կառավարությունը գլխավորապես շարունակում էր միջոցները հատկացնել ավանդական հրատարակչություններին, ինչը, սակայն, չէր խանգարում նոր հրատարակչությունների ձևավորմանն ու կայացմանը:

Հրատարակչական նոր շուկայի ձևավորման-կայացմանը նպաստում էին նաև Հայաստանի Հանրապետության հաստատած դիվանագիտական հարաբերությունները այլ պետությունների և միջազգային կառույցների հետ: Օրինակ՝ Ֆրանսիական դեսպանատան օժանդակությամբ բազմաթիվ գրքեր տպագրվեցին ֆրանսերենից կատարված թարգմանություններով:

Պետք է նկատել նաև, որ նախկինում ակտիվորեն հրատարակվող ԽՍՀՄ հանրապետությունների գրականությունը մղվեց ետին պլան: Բավական է նշել, որ այդ հանրապետություններից գրական ամենամուրկապերով առնչակից վրաց գրականությունն անգամ տեսադաշտից դուրս մնաց և միայն 1997-ին մեզանում տպագրվեց վրացերենից թարգմանություն:

Խոսքի ազատության և գրաքննության բացակայության պայմաններում հրատարակչություններն սկսեցին պատվերներ վերցնել նաև անհատներից: Շատ անհատներ պատրաստ էին առանց ակնկալիքի գումարներ տրամադրել հրատարակչություններին իրենց ստեղծագործությունները տպագրված տեսնելու համար: Այս պարագայում հրատարակչությունների բուն խնդիրը դառնում էր գումար վաստակելը՝ անմասն մնալով հրատարակչական կայուն քաղաքականությանը:

Քանի որ հատկապես անկախության առաջին տարիներին դեռևս բարձիթողի վիճակում էին հեղինակային իրավունքի և այլ հարակից իրավական խնդիրները, հրատարակչությունների համար շահույթի միջոց էին ծառայում հիմնականում տպագրական աշխատանքները, ինչը հրատարակչական շուկան նմանեցնում էր սոսկ տեխնիկական սպասարկման: Վերջին երկուերեք տարիներին, սակայն, այս մոտեցումը նվազման միտում ունի: Հատկապես՝ «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», «Անտարես», «Զանգակ», «Էդիթ Պրինտ» հրատարակչությունների աշխատանքի շնորհիվ Հայաստանում սկսում են հստակվել **հրատարակչություն** հասկացության իրական գործառնությունները:

Միջազգային դրամաշնորհների գործուն ազդեցությամբ արդեն առողջ մրցակցություն է սկսվում

հրատարակչությունների միջև: Դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների պահանջների կատարումը, վստահություն ձեռք բերելը դարձել է հրատարակիչների առաջնային խնդիրը: Հրատարակիչների մեջ մրցակցություն է ձևավորվել արդեն, թե տվյալ ստեղծագործության հեղինակային իրավունքները ով առաջինը ձեռք կբերի, ինչը էականորեն փոխում է շուկայի պատկերը:

Հրատարակչական շուկայի ձևավորման վրա մեծ է նաև պետպատվերի և պետաջակցության դերը, որը Հայաստանում սկսեց գործել 2002 թվականից: Սա լուրջ խթան էր գրահրատարակչության զարգացման համար: Հրատարակչություններից յուրաքանչյուրը փորձում է անմասն չմնալ պետության կողմից տրամադրվող միջոցներով գիրք հրատարակելուց, ինչը ստիպում է ավելի բարեխիղճ ու արժեքավոր աշխատանքի:

Հայաստանյան հրատարակչական շուկայի ձևավորման վրա մեծ է նաև տարբեր հիմնադրամների ներգործությունը: Օրինակ՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ բազմաթիվ գրքեր է հրատարակել ու վերահրատարակել Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը: Նույնը կարելի է ասել Հայկական բարեգործական ընդհանուր միության և այլ ընկերությունների մասին:

Հիմնադրամների օժանդակությունը հիմնականում պայմանավորված է լինում տվյալ ընկերությունների կոնկրետ քաղաքականությամբ: Կարելի է վստահաբար ասել, որ հայաստանյան հրատարակչական շուկան գլխավորապես պայմանավորված է միջազգային դրամաշնորհների, տեղային հիմնադրամների և պետպատվերների միջոցով: Սա թեպետ խիստ կերպով

օգնում է հրատարակչական շուկայի կայացմանը, սակայն բավարար չէ գրաշուկայի ձևավորման համար, քանի որ նշված միջոցներով հրատարակվող գրքերը հաճախ «ննջում» են վաճառակետերում:

Մեզ համար ամենակարևոր խնդիրներից է գրաշուկայի և հրատարակչական շուկայի համաձայնեցվածությունը:

Պետք է նշել, որ Հայաստանում միայն հայերեն գրքեր չէ, որ հրատարակվում են: Սկսած խորհրդային ժամանակներից՝ բազմաթիվ գրքեր են տպագրվում ռուսերենով: Անկախությունից հետո ռուսերենին գումարվեցին նաև անգլերեն, ֆրանսերեն գրքերը: Թեպետ քանակով քիչ, այնուամենայնիվ, հրատարակվում են Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների լեզվով գրքեր, օրինակ՝ քրդերեն:

Մեր ուսումնասիրությունը, բնականաբար, հենված է հայալեզու գրքերի վիճակագրության հիման վրա:

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ՝ 1991-2013 ԹԹ.

ա) Զարգացման փուլերը

1991-1996 թթ.

Խորհրդային տարիներին, այսինքն՝ մինչև 1991 թվականը Հայաստանում գործող գրեթե բոլոր հրատարակչությունները պետական էին, այսինքն՝ ֆինանսավորվում էին պետության կողմից, և ըստ այդմ՝ համապատասխան պատվեր կատարում: Երևույթը որոշակիորեն, իներցիայի ուժով տարածվում է Հայաստանում թարգմանությունների հրատարակման առանձնահատկությունների վրա մինչև 1991-1993 թվականները: Այդ շրջանում հրատարակված մի շարք թարգմանական գրքեր ոչ այնքան նոր իրականության ու ժամանակաշրջանի թելադրանքով ու պահանջարկով ձևավորված առաջարկ են, որքան մեծ մասամբ՝ դեռևս խորհրդային շրջանում, այսպես կոչված՝ պետականով նախատեսված թարգմանությունների իրացում:

Հայաստանի անկախացման առաջին տարիները գրահրատարակչական ոլորտում ընդհանրապես երկակի զգացողությունների ժամանակահատված էր: Մի կողմից՝ արդեն հնարավորություն կար ազատորեն թարգմանել ու հրատարակել նախկինում արգելված բազմաթիվ գրողների, մյուս կողմից՝ արդեն չկային կամ գրեթե չկային ֆինանսական այն միջոցները, որոնք ժամանակին տրամադրում էր պետությունը նմանատիպ ծրագրերի համար: Եվ եթե 1991-1992 թվականներին հրատարակչական դաշտում դեռ որոշակի աշխուժություն նկատելի էր, ապա դա պայմանավորված էր նրանով, որ մեկ-երկու տարի առաջ պետականով նախատեսված

միջոցներն էին շարունակվում իրացվել: Պատահական չէ, որ 1993-1995 թվականներին հայերեն գրքի տպագրությունը, թեկուզ զուտ քանակային առումով, նվազում է (տե՛ս Աղյուսակ 1): Բայց ուշագրավն այն է, որ գրքերի տպագրության նվազումը գրեթե չի ազդել նույն ժամանակահատվածում թարգմանական գրքերի, այդ թվում՝ գեղարվեստական թարգմանությունների քանակական ցուցանիշների վրա (տե՛ս Աղյուսակ 1): Դրանք հիմնականում կայուն են:

Ցավոք, որոշ կարևոր նախագծեր, հատկապես՝ թարգմանական, վերը բերված պատճառներով այլևս շարունակություն չստացան: Մասնավորապես՝ «Նաիրի» վերանվանված «Սովետական գրող» պետական հրատարակչությունը դեռ 1990 թվականին նախաձեռնել էր համաշխարհային գրականության մատենաշար 50 հատորով, մեծ տպաքանակներով (միջինը՝ 30 000), ընդ որում՝ բոլորը բնագիր լեզուներից կատարվող թարգմանություններ, որոնցից սակայն հրատարակվեց մոտ 10 գիրք: Մյուսներն այդպես էլ լույս չտեսան:

Մյուս կողմից՝ «Գարուն» ամսագիրը 1991 թվականին հիմնադրեց «Ապոլոն» թարգմանական հրատարակչությունը, որը, հատկապես անկախության առաջին տարիներին թարգմանական, հատկապես գեղարվեստական թարգմանության ոլորտի առաջամարտիկն էր Հայաստանում: Այստեղ էլ խոսքը մեծ տպաքանակների էր վերաբերում: Քանի որ աշխատանքը կազմակերպվում էր բաժանորդագրության սկզբունքով, ապա դա նպաստում էր, որ հատկապես առաջին շրջանում գրքերը տպագրվեին ավելի քան 40 000 տպաքանակով:

«Ապոլոնը» խոստումնալից սկիզբ էր այն առումով, որ միանգամից փորձում էր լուծել խորհրդային շրջանում գործող ակնառու երկու շատ կարևոր բաց.

Նախ՝ թարգմանվում էին հեղինակներ, որոնք նախկինում հայերեն չէին հրատարակվել առանձին գրքերով (Ֆրանց Կաֆկա, Հերման Հեսսե, Ալբեր Կամյու, Թոմաս Վուլֆ և այլն), մյուս կողմից՝ թարգմանությունները կատարվում էին բնագիր լեզուներից (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլն):

Թարգմանական գործի համար արգասաբեր եղավ նաև «Սարգիս Խաչենց» և «Ա. և Մ.» հրատարակչությունների հիմնումը: Եվ եթե դրանցից առաջին թարգմանում և հրատարակում էր մշակութաբանական, արվեստագիտական, փիլիսոփայական գրականություն ամենատարբեր լեզուներից, ապա «Ա. և Մ.» հրատարակչությունը հրատարակում էր հիմնականում գեղարվեստական թարգմանություններ և հիմնականում ֆրանսերենից:

Այս շրջանում Հայաստանում տպագրվել է 3908 հայերեն գիրք, որից՝ 364-ը (9.3%) թարգմանական, այդ թվում՝ 91-ը (25%) գեղարվեստական թարգմանություն:

1997-2001 թթ.

Այս շրջանը կարելի է համարել հրատարակչությունների համար ինքնահաստատման շրջան: Դրանցից մի քանիսը դադարեցրին իրենց գործունեությունը, փոխարենը հիմնադրվեցին նորերը, թեպետ դրանց մեծամասնությանը պայմանականորեն պետք է անվանել հրատարակչություն, քանզի չունեին հստակ հայեցակարգ և տպագրում էին այն, ինչ պատվիրվում էր, հատկապես՝ մասնավոր անձանց ու կազմակերպությունների կողմից: Ամեն դեպքում այս փուլը կարևոր է նրանով, որ հայերեն գրքերի քանակը տարեկան կտրվածքով սկսեց վերընթաց արձանագրել: Զուտ թվային տեսքով որոշակի աճ գրանցվեց նաև թարգմանության

ասպարեզում: Սակայն եթե բովանդակային առումով դիտարկենք հարցը, ապա դրանց մեծամասնությունը տարբեր ուղեցույցների, հանձնարարականների, միջազգային տարբեր կազմակերպությունների քարոզչական բնույթ ունեցող նյութեր են:

Բացառություն են թերևս այս շրջանում հրատարակված փիլիսոփայական, մշակութաբանական երկերը, որոնք հրատարակում էր «Սարգիս Խաչենցը»: Կարելի է ասել, որ հենց այդ հրատարակչությունն էր, որ առաջ էր տանում թարգմանական գործը՝ մինևույն ժամանակ բարձր պահելով չափանիշները: Իհարկե, որոշ հրատարակիչներ նույնպես որոշակի գործ արել են այս շրջանում, սակայն դրանք դրվագային, ոչ համակարգված բնույթ էին կրում:

Պատահական չէ, որ այս նույն շրջանում, երբ թվում է գրահրատարակչական ակտիվություն է, այնուամենայնիվ, խիստ պասիվ է գեղարվեստական թարգմանությունների հրատարակումը: Օրինակ՝ եթե 1991-1996 թթ. դրանք կազմում են տարվա թարգմանական հրատարակությունների միջինը 25%-ը, ապա 1997-2002 թթ. արդեն գործ ունենք 18.4%-ի հետ:

Ընդհանուր առմամբ՝ այս շրջանում հրատարակվել է 6055 հայերեն գիրք, որից 482-ը (7%) թարգմանական, այդ թվում՝ 89-ը (18.4%) գեղարվեստական թարգմանություն:

2002-2013 թթ.

Սա այն շրջանն է, երբ էապես փոխվեց ոչ միայն հրատարակչական գործը Հայաստանում, այլև նորովի սկսեց կազմակերպվել թարգմանական գործը: Նախ՝ 2002 թվականից Հայաստանում սկսեց գործել պետական պատվերի և պետական աջակցության

ինստիտուտը, որը զգալի օգնություն էր հրատարակիչներին: Մյուս կողմից՝ հրատարակիչները սկսեցին ակտիվորեն համագործակցել տարբեր դրամաշնորհային կազմակերպությունների հետ: Աղյուսակ 1-ում հստակ երևում է, թե զուտ թվաքանակի տեսանկյունից ինչպես է բարելավվել ոչ միայն հայերեն գրքի տպագրության քանակային դինամիկան, այլև թարգմանական, այդ թվում՝ գեղարվեստական թարգմանություններն են էական աճ գրանցել:

Այլ հարց է, որ շատ հաճախ այս ֆինանսավորումները օգտագործվել են ոչ բարեխղճորեն: Մասնավորապես՝ հրատարակված գրքերում նշվել է այլ տպաքանակ, այնինչ՝ իրականում տպագրվել է շատ ավելի քիչ քանակով, երբեմն՝ նույնիսկ նմուշի համար՝ սուկ դրամաշնորհյալներին հաշվետու լինելու համար: Մյուս կողմից՝ այդ գրքերի շուրջ չի կատարվում համապատասխան մարկետինգային աշխատանք, ավելին՝ քանի որ դրամաշնորհները երբեմն փակում էին հրատարակչական բոլոր ծախսերը, այդ գրքերից շատերը նույնիսկ վաճառքի չեն հանվել: Այլ խոսքով՝ գործառությանը տեսանկյունից ոչ մի ազդեցություն չեն թողել:

Այս և նմանատիպ այլ հանգամանքները, ըստ էության, թարգմանական գործը հիմնականում վեր են ածում պայմանականության:

Բարեբախտաբար, հատկապես՝ վերջին 4-5 տարիներին դրությունն էապես փոխվել է: Արդեն ուրվագծվել են այն հրատարակչությունները, որոնք ունեն հստակ ծրագրեր ու հայեցակարգ և իրենց գործունեությամբ փոխում են գրաշուկայի նկարագիրը: «Անտարես», «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», «Ջանգակ», «Էդիտ Պրինտ», ինչ-որ առումով նաև «Ակտուալ արվեստ»

հրատարակչությունները այսօր կարողանում են ապահովել հրատարակչական բարձր մակարդակ, այդ թվում՝ քաղաքակիրթ ձևերի մեջ են դնում թարգմանական գործը: Բնականաբար, ամեն մեկը յուրովի և ամեն մեկը դեռակատարության իր չափով: Հենց նրանց աշխատանքի արդյունքում է, որ սկսել է ձևավորվել մրցակցություն:

Այդ մրցակցության և դաշտի կայունացման մասին են վկայում նաև թվերը: Այս առումով՝ 2012 և 2013 թվականներին հայերեն գրքերի տպագրության քանակային անկումը, օրինակ, բնավ էլ անհանգստացնող չէ: Ընդհակառակը՝ դա արդեն վկայում է, որ հրատարակիչները տարերայնորեն չեն գիրք տպագրում: Պատահական չէ, որ ընդհանուր թվաքանակի նվազմանը զուգընթաց աճել է թարգմանական գրքերի, հատկապես՝ գեղարվեստական թարգմանությունների թիվը: Ընդ որում՝ դրանք բովանդակային առումով էլ չափազանց շատ են տարբերվում նախկինում հրատարակված գրքերից: Նշենք, որ օտար լեզուների ընդգրկման տեսանկյունից էլ զգալի տեղաշարժ է նկատվում: 2012 և 2013 թվականներին գեղարվեստական թարգմանությունները, տոկոսային հարաբերությամբ, լավագույն ցուցանիշն ունեն 1991 թվականից ի վեր:

«Անտարես» հրատարակչությունը հիմնել է «Պարտադիր ընթերցանություն» մատենաշարը, որտեղ ներառված են համաշխարհային գրականության լավագույն գործերը՝ բնագրային թարգմանություններով (արդեն հրատարակվել է 19 գիրք), «Օտար գիր» մատենաշարը, որում ընդգրկված գրքերն առաջին անգամ են թարգմանվում հայերեն և այլն, «Աշխարհը հայերենով» մատենաշար ունի «Զանգակ» հրատարակչությունը, ֆրանսալեզու գրականության շարք է հրատարակում «Ակտուալ արվեստը» և այլն:

Ընդհանրացնենք՝ 2002-2013 թվականների ընթացքում հրատարակվել է 25247 հայերեն գիրք, որից 1864-ը (7.3%) թարգմանական, այդ թվում՝ 718 (38.5%) գեղարվեստական թարգմանություն:


Աղյուսակ 1. Հայաստանում 1991-2013թթ. հրատարակված հայերեն գրքերի քանակը՝ ըստ տարիների, թարգմանական գրքերի թիվը, այդ թվում՝ գեղարվեստական գրքերի թիվը

Տարի	Հրատարակված հայալեզու գրքերի ընդհանուր թիվը	Թարգմանական գրքերի թիվը/%	Որից գեղարվեստական (թիվը/%)
1991	759	90 / 11.8	21 / 23.3
1992	620	52 / 8.3	16 / 30.7
1993	524	52 / 9.9	16 / 30.7
1994	533	61 / 11.4	17 / 27.8
1995	649	49 / 7.5	13 / 26.5
1996	823	58 / 7.04	8 / 13.7
1997	865	54 / 6.24	8 / 14.8
1998	1006	83 / 8.2	31 / 37.4
1999	1132	117 / 10.3	17 / 14.5
2000	1550	130 / 8.3	21 / 16.1
2001	1502	98 / 6.5	12 / 12.2
2002	1689	121 / 7.1	38 / 31.4
2003	2073	139 / 6.7	42 / 30.2
2004	1942	134 / 6.9	44 / 32.8
2005	1997	127 / 6.3	40 / 31.4
2006	2069	111 / 5.3	37 / 33.3
2007	2473	189 / 7.6	60 / 31.7
2008	2446	181 / 7.3	66 / 36.4
2009	2476	181 / 7.3	73 / 40.3
2010	2382	209 / 8.7	83 / 39.7
2011	2143	150 / 6.9	65 / 43.3
2012	1979	161 / 8.1	91 / 56.2
2013	1577	161 / 10.2	89 / 55.2

Ընդհանուր

Հրատարակված հայտագու գրքերի ընդհանուր թիվը	Թարգմանական գրքերի թիվը/%	Որից գեղարվեստական (թիվը, %)
35209	2708 / 7.6	908 / 33.5

Նկար 1. Հայաստանում 1991-2013 թթ. հրատարակված հայերեն գրքերի դինամիկան ըստ տարիների (քանակ)



բ) Թարգմանությունների լեզուն, դրանց դինամիկան

Նախապես անհրաժեշտ ենք համարում նշել, որ թարգմանությունների լեզուն բնավ չի ենթադրում, թե դրանց քանակն ու ընդգրկումները համապատասխանում են նաև աշխարհագրական ընդգրկումներին: Հարցն այն է, որ Հայաստանում ավելի շատ լեզուներ և երկրներ ներկայացնող հեղինակներ են թարգմանվել, քան դա արտացոլվում է ներքևում բերվող վիճակագրական աղյուսակներին: Ավելին, դա ևս մեկ անգամ գալիս է փաստելու, թե որքան մեծ դեր են դեռևս խաղում միջնորդ լեզվով կատարված թարգմանությունները:

Ստորև ներկայացնում ենք հայերեն թարգմանությունների բաշխվածությունը 1991-2013 թվականներին՝ ըստ լեզուների: Բնականաբար, այստեղ ևս տվյալները մոտավոր են և դա պայմանավորված է մի կողմից՝ կա՛մ հրատարակություններում, կա՛մ մատենագիտական ցանկերում բնագրի լեզվի չնշմամբ, մյուս կողմից՝ հրատարակիչների ու թարգմանիչների կեղծիքներով: Ըստ հնարավորինս՝ փորձել ենք վերացնել, ճշտել թյուրիմացություններն ու վրիպակները: Մնացած դեպքերում այդտեսակ թարգմանությունները ցանկերում նշված են որպես **չճշտված**: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ **չճշտված** թարգմանական լեզուները վերաբերում են կա՛մ ռուսերենին, կա՛մ անգլերենին: Վիճակագրության ներկայացման տեսանկյունից, հատկապես տոկոսային հարաբերության բաշխման առումով, դրանք, ըստ էության, ընդհանուր պատկերը չեն փոխում, որովհետև, այսպես թե այնպես, ռուսերենն ու անգլերենը 1991-2013 թվականների ընթացքում հայ թարգմանական գործի շրջանակում ամենակիրառական լեզուներն են:

Կատարված թարգմանությունների լեզվի բաշխումն ըստ տարիների օգնում է բացահայտել հետաքրքիր օրինաչափություններ: Նախևառաջ՝ հստակվում է պատկերը թարգմանիչ-հրատարակիչ հարաբերությունների առումով մի հետաքրքիր փաստ. դատելով մամուլում ու հատկապես «Գարուն», «Արտասահմանյան գրականություն», «Նարցիս» հանդեսներում տպագրված թարգմանությունների լեզվական աշխարհագրությունից, կարելի է ասել, որ դրանք չափազանց բազմազան են: Այլ հարց է, որ դրանք հետագայում գրքի չեն վերածվում, և շատ հաճախ մնում են մամուլի էջերում և ձևավորում թյուր տպավորություններ: Մասնավորապես՝ մամուլում չափազանց ակտիվ է իսպաներեն, իտալերեն, արաբերեն լեզուներով թարգմանիչների երևումը, այնինչ՝ գրքի տեսքով դրանք համեմատաբար թույլ դիրքերում են: Այլ խոսքով՝ մամուլով ձևավորված տպավորությունը կամ գիտելիքը՝ որպես տեղեկատվություն, բոլորովին այլ է գրքի պարագայում:

Մյուս կողմից՝ հստակվում է, որ միջին կտրվածքով յուրաքանչյուր տարի հայերեն հրատարակվել են 10 լեզուներից թարգմանություններ, ընդ որում՝ լեզուների քանակը տարեցտարի ավելանալու միտում է ցուցաբերել: Ամենաքիչ լեզուներ ընդգրկում են 1991, 1993, 1994, 1995, 1996 թվականները՝ 6-ական լեզու: Ամենաշատը՝ 2012 թվականը՝ 17 լեզու (տե՛ս Աղյուսակ 2):

Տարբեր տարիներին տարբեր օտար լեզուների, այսպես ասած՝ ակտիվացումը պայմանավորված է տարբեր հանգամանքներով, հիմնականում ինչ-ինչ ծրագրերի իրականացմամբ: Դրանք գուցե վիճակագրական առումով որոշակի փոփոխություններ մտցնում են, սակայն բովանդակային ու գերիշխող դիրքի առումներով ոչինչ չեն փոխում: Օրինակ՝ 1999 թվականին

իտալերենով ամենաշատ գրքերն են թարգմանվել՝ 22: Սակայն դրանք բոլորն էլ 10-20 էջանոց փոքրիկ մանկական գրքույկներն են:

Հայ թարգմանական գործի ընդհանուր համատեքստում լեզուները հետաքրքիր գործառնական բնույթով են հանդես գալիս: Օրինակ՝ եթե ռուսերենով և անգլերենով թարգմանվում են ամենաբազմազան գրքեր, ապա ֆրանսերենը՝ բացառապես գեղարվեստական գրականության և Հայոց ցեղասպանության թեմաներով ստեղծված գրքերի թարգմանության լեզու է: Նույնը, որոշ վերապահումներով, վերաբերում է նաև գերմաներենին: Զարմանալիորեն քիչ են իսպաներենից և իտալերենից կատարված թարգմանությունները, այնինչ, հաշվի առնելով, թե ինչ գեղարվեստական գրականություն է ստեղծվել այդ լեզուներով, թվում էր, թե դրանք ամենակիրառականը պետք է լինեն:

Վերջին 5-6 տարիներին նկատելի է, որ մեծ ուշադրություն է դարձվում բնագիր լեզուներից կատարված թարգմանություններին, հատկապես գեղարվեստական գրականության ոլորտում: Ներքոբերյալ աղյուսակները վկայում են, որ այդ առումով էլ սկսել է որոշակի տեղաշարժ գրանցվել:

Աղյուսակ 2. Թարգմանությունների բաշխվածությունն ըստ լեզուների

1991

1.	Ռուսերեն	61
2.	Անգլերեն	12
3.	Ֆրանսերեն	5
4.	Իսպաներեն	2
5.	Գերմաներեն	2
6.	Հին հունարեն	1
7.	Չճշտված	13

1994

1.	Անգլերեն	21
2.	Ֆրանսերեն	14
3.	Ռուսերեն	12
4.	Գերմաներեն	2
5.	Պարսկերեն	1
6.	Հունարեն	1
7.	Չճշտված	5

1992

1.	Ռուսերեն	40
2.	Անգլերեն	8
3.	Ֆրանսերեն	6
4.	Գերմաներեն	3
5.	Պարսկերեն	2
6.	Իսպաներեն	1
7.	Հին հունարեն	1
8.	Լեհերեն	1
9.	Չճշտված	10

1995

1.	Անգլերեն	13
2.	Ֆրանսերեն	11
3.	Ռուսերեն	7
4.	Նորվեգերեն	1
5.	Հին հունարեն	1
6.	Գերմաներեն	1
7.	Չճշտված	8

1993

1.	Ռուսերեն	24
2.	Անգլերեն	14
3.	Իտալերեն	2
4.	Ֆրանսերեն	2
5.	Պարսկերեն	1
6.	Գերմաներեն	1
7.	Չճշտված	4

1996

1.	Ռուսերեն	17
2.	Ֆրանսերեն	9
3.	Անգլերեն	8
4.	Պարսկերեն	3
5.	Իսպաներեն	2
6.	Իտալերեն	1
7.	Չճշտված	10

1997

1.	Ռուսերեն	20
2.	Ֆրանսերեն	8
3.	Անգլերեն	7
4.	Գերմաներեն	1
5.	Իտալերեն	1
6.	Լատիներեն	1
7.	Թուրքերեն	1
8.	Վրացերեն	1
9.	Չճշտված	12

1999

1.	Ֆրանսերեն	21
2.	Անգլերեն	20
3.	Ռուսերեն	20
4.	Վրացերեն	3
5.	Իսպաներեն	2
6.	Արաբերեն	1
7.	Բուլղարերեն	1
8.	Գերմաներեն	1
9.	Հին հունարեն	1
10.	Պարսկերեն	1
11.	Չճշտված	18

1998

1.	Իտալերեն	22
2.	Ռուսերեն	19
3.	Անգլերեն	12
4.	Ֆրանսերեն	8
5.	Գերմաներեն	3
6.	Պարսկերեն	2
7.	Հունարեն	1
8.	Վրացերեն	1
9.	Բուլղարերեն	1
10.	Նորվեգերեն	1
11.	Սերբերեն	1
12.	Չճշտված	3

2000

1.	Ռուսերեն	36
2.	Ֆրանսերեն	21
3.	Անգլերեն	14
4.	Գերմաներեն	4
5.	Պարսկերեն	3
6.	Չինարեն	1
7.	Դանիերեն	1
8.	Թուրքերեն	1
9.	Իտալերեն	1
10.	Քրդերեն	1
11.	Իսպաներեն	1
12.	Հին հունարեն	1
13.	Չճշտված	21

2001

1.	Ռուսերեն	26
2.	Ֆրանսերեն	13
3.	Անգլերեն	11
4.	Գերմաներեն	2
5.	Հին հունարեն	2
6.	Իտալերեն	1
7.	Իսպաներեն	1
8.	Վրացերեն	1
9.	Չճշտված	23

2003

1.	Ռուսերեն	52
2.	Անգլերեն	25
3.	Ֆրանսերեն	9
4.	Վրացերեն	5
5.	Գերմաներեն	5
6.	Պարսկերեն	4
7.	Լիտվերեն	2
8.	Հոլանդերեն	1
9.	Շվեդերեն	1
10.	Բուլղարերեն	1
11.	Թուրքերեն	1
12.	Սերբերեն	1
13.	Լատիներեն	1
14.	Չճշտված	14

2002

1.	Ռուսերեն	31
2.	Անգլերեն	23
3.	Ֆրանսերեն	16
4.	Գերմաներեն	7
5.	Իսպաներեն	2
6.	Լիտվերեն	2
7.	Շվեդերեն	1
8.	Պարսկերեն	1
9.	Բասկերեն	1
10.	Սերբերեն	1
11.	Լատիներեն	1
12.	Վրացերեն	1
13.	Չճշտված	17

2004

1.	Ռուսերեն	40
2.	Անգլերեն	26
3.	Ֆրանսերեն	14
4.	Գերմաներեն	7
5.	Իտալերեն	3
6.	Պարսկերեն	3
7.	Շվեդերեն	1
8.	Լիտվերեն	1
9.	Արաբերեն	1
10.	Դանիերեն	1
11.	Քրդերեն	1
12.	Չճշտված	12

2005

1.	Ռուսերեն	23
2.	Անգլերեն	22
3.	Ֆրանսերեն	12
4.	Գերմաներեն	4
5.	Պարսկերեն	4
6.	Իսպաներեն	3
7.	Վրացերեն	1
8.	Էստոներեն	1
9.	Լատվերեն	1
10.	Լիտվերեն	1
11.	Բուլղարերեն	1
12.	Իտալերեն	1
13.	Հունգարերեն	1
14.	Ճապոներեն	1
15.	Արաբերեն	1
16.	Չճշտված	21

2006

1.	Ռուսերեն	24
2.	Անգլերեն	14
3.	Ֆրանսերեն	9
4.	Պարսկերեն	8
5.	Գերմաներեն	5
6.	Լեհերեն	2
7.	Լիտվերեն	2
8.	Վրացերեն	2
9.	Բուլղարերեն	1
10.	Ուկրաիներեն	1
11.	Իսպաներեն	1
12.	Թուրքերեն	1
13.	Հին հունարեն	1
14.	Բասկերեն	1
15.	Հունարեն	1

16.	Նորվեգերեն	1
17.	Չճշտված	13

2007

1.	Ռուսերեն	54
2.	Ֆրանսերեն	25
3.	Անգլերեն	18
4.	Պարսկերեն	11
5.	Գերմաներեն	9
6.	Վրացերեն	2
7.	Իտալերեն	2
8.	Հունարեն	2
9.	Իսպաներեն	1
10.	Բասկերեն	1
11.	Հին հունարեն	1
12.	Հոլանդերեն	1
13.	Արաբերեն	1
14.	Չճշտված	12

2008

1.	Ռուսերեն	46
2.	Անգլերեն	31
3.	Ֆրանսերեն	18
4.	Պարսկերեն	7
5.	Գերմաներեն	4
6.	Իտալերեն	3
7.	Լատվերեն	2
8.	Հունարեն	1
9.	Հին վրացերեն	1
10.	Շվեդերեն	1
11.	Վրացերեն	1
12.	Թուրքերեն	1
13.	Իսպաներեն	1
14.	Չճշտված	10

2009

1.	Ռուսերեն	63
2.	Անգլերեն	32
3.	Ֆրանսերեն	13
4.	Պորտուգալերեն	5
5.	Պարսկերեն	5
6.	Իսպաներեն	3
7.	Թուրքերեն	2
8.	Իտալերեն	2
9.	Հունարեն	1
10.	Քրդերեն	1
11.	Ճապոներեն	1
12.	Գերմաներեն	1
13.	Բուլղարերեն	1
14.	Չճշտված	16

2011

1.	Ռուսերեն	46
2.	Անգլերեն	23
3.	Ֆրանսերեն	12
4.	Գերմաներեն	5
5.	Պարսկերեն	4
6.	Իսպաներեն	3
7.	Հոլանդերեն	2
8.	Հին հունարեն	2
9.	Վրացերեն	2
10.	Արաբերեն	1
11.	Իտալերեն	1
12.	Սերբերեն	1
13.	Չճշտված	10

2010

1.	Ռուսերեն	100
2.	Անգլերեն	20
3.	Ֆրանսերեն	18
4.	Գերմաներեն	6
5.	Վրացերեն	4
6.	Պորտուգալերեն	4
7.	Պարսկերեն	3
8.	Իսպաներեն	3
9.	Բուլղարերեն	2
10.	Իտալերեն	2
11.	Ուկրաիներեն	1
12.	Արաբերեն	1
13.	Հունգարերեն	1
14.	Լատվիերեն	1
15.	Չճշտված	16

2012

1.	Ռուսերեն	48
2.	Անգլերեն	28
3.	Ֆրանսերեն	16
4.	Գերմաներեն	9
5.	Պարսկերեն	5
6.	Իտալերեն	5
7.	Իսպաներեն	4
8.	Հունարեն	3
9.	Հոլանդերեն	2
10.	Թուրքերեն	1
11.	Շվեդերեն	1
12.	Լատվիերեն	1
13.	Ուկրաիներեն	1
14.	Հինդի	1
15.	Պորտուգալերեն	1
16.	Վրացերեն	1
17.	Բուլղարերեն	1
18.	Չճշտված	13

2013


1.	Անգլերեն	47
2.	Ռուսերեն	39
3.	Ֆրանսերեն	13
4.	Գերմաներեն	6
5.	Իտալերեն	6
6.	Իսպաներեն	4
7.	Թուրքերեն	2
8.	Սերբերեն	2
9.	Բուլղարերեն	1

10.	Պորտուգալերեն	1
11.	Վրացերեն	1
12.	Լատվերեն	1
13.	Շվեդերեն	1
14.	Արաբերեն	1
15.	Հոլանդերեն	1
16.	Պարսկերեն	1
17.	Չճշտված	5

Այսպիսով, 1991–2013 թվականների ընթացքում հայերեն թարգմանություններ են կատարվել և առանձին գրքերով հրատարակվել են 32 աղբյուր լեզուներից:

Ահա դրանց ցանկը. 1. Ռուսերեն՝ ընդհանուր թարգմանությունների 31.1%-ը 2. Անգլերեն 16.8% 3. Ֆրանսերեն 10.8% 4. Գերմաներեն 3.2% 5. Պարսկերեն 2.5% 6. Իտալերեն 1.95% 7. Իսպաներեն 1.25% 8. Վրացերեն 0.96% 9-10. Հին հունարեն, Պորտուգալերեն 0.4% 11-13. Հունարեն, Բուլղարերեն, Թուրքերեն 0.36% 14-16. Լիտվերեն, Հոլանդերեն, Արաբերեն 0.25% 17-18. Շվեդերեն, Սերբերեն 0.22% 19. Լատվերեն 0.18% 20-24. Նորվեգերեն, Բասկերեն, Քրդերեն, Ուկրաիներեն, Լեհերեն 0.11% 25-28. Հունգարերեն, Լատիներեն, Դանիերեն, Ճապոներեն 0.07% 29-32. Հին վրացերեն, Հինդի, Էստոներեն, Չինարեն 0.03%:

Նկար 2. Առաջատար 5 աղբյուր լեզուներ, 1991-2013



Թարգմանության առաջատար լեզուների այսպիսի հնգյակը, թերևս սպասելի էր, թեպետ մի փոքր զարմանալի կարող է թվալ դրանց շարքում պարսկերենի հայտնվելը: Այդ առումով նշենք, որ եթե ռուսերենն ու անգլերենը բացահայտ առաջատար են այն առումով, որ այդ լեզուների իմացությունը Հայաստանում շատ տարածված է ընդհանրապես, ապա ֆրանսերենի, գերմաներենի ու հատկապես՝ պարսկերենի առաջատարությունը, բացի այդ հանգամանքից, այլ պատճառներ ևս ունի: Նախ՝ նշենք, որ այս վերջին լեզուներով հիմնականում թարգմանվում են գեղարվեստական, գիտական, փիլիսոփայական, շատ քիչ չափով նաև մանկական գրքեր: Դրանք, որպես կանոն, չեն ծառայում որպես միջնորդ լեզուներ՝ թարգմանություններ կատարելու համար: Մյուս կողմից՝ այդ լեզուները կրող պետությունների դեսպանատները Հայաստանում շատ ակտիվ են և պարբերաբար դրամաշնորհային

ծրագրեր են իրականացնում: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը, Հայաստանում Իրանի իսլամական հանրապետության դեսպանատունն ու մասնավորապես մշակույթի բաժինը, Գերմանիայի, Ավստրիայի դեսպանատները պարբերաբար նախաձեռնում կամ ֆինանսավորում են հայերեն թարգմանություններ:

Եթե տոկոսային հարաբերության տեսանկյունից արտահայտենք պատկերը, ապա կունենանք հետևյալը.

Ռուսերեն

Գեղարվեստական գրականություն – 18.8%

Ուսումնական գրականություն – 31.1 %

Մանկական գրականություն – 31.5%

Այլ – 18.6 %

Անգլերեն

Գեղարվեստական գրականություն – 11.2%

Ուսումնական գրականություն – 27.4 %

Մանկական գրականություն – 28.6%

Այլ – 33.8 %

Ֆրանսերեն

Գեղարվեստական գրականություն – 87.9%

Ուսումնական գրականություն – 2.2 %

Մանկական գրականություն – 8.7%

Այլ – 1.2 %

Գերմաներեն

Գեղարվեստական գրականություն – 48.8%

Ուսումնական գրականություն – 7.1 %

Մանկական գրականություն – 12.2%

Այլ – 31.9 %

Պարսկերեն

Գեղարվեստական գրականություն – 89.7%

Ուսումնական գրականություն – 0.7 %

Մանկական գրականություն – 8.4%


Այլ – 1.2%

գ) Գրական-գեղարվեստական թարգմանությունների ընդհանուր ծավալը թարգմանական գրաարտադրանքի մեջ

Գեղարվեստական թարգմանություններին բաժին է ընկնում ընդհանուր թարգմանական գործի 33.5%-ը: Ընդ որում՝ հենց գեղարվեստական թարգմանություններն են ապահովում թարգմանվող աղբյուր լեզուների բազմազանությունը, որովհետև ուսումնական, տեղեկատվական և այլ բնույթի տեքստերի թարգմանությունները Հայաստանում հիմնականում կատարվում է կան ռուսերենից, կան անգլերենից: Ահա այդ պատճառով Աղյուսակ 2-ում գեղարվեստական գրքերին վերաբերող թվերը հատուկ չենք առանձնացրել:

Նկար 3.-ի տվյալներից երևում է, որ Հայաստանում գեղարվեստական թարգմանությունը վերընթաց զարգացման փուլում է: Ժանրային տեսանկյունից ամենից շատ թարգմանվում են բանաստեղծական գրքեր, այդ թվում՝ մանկական (42.6%), այնուհետև՝ փոքր արձակի ժանրերը՝ վիպակներ, պատմվածքներ, հեքիաթներ, այդ թվում՝ մանկական (38.5%), հաջորդը՝ վեպերն են (18.9%);

Նկար 3. Գեղարվեստական թարգմանության դինամիկան Հայաստանում (%), 1991-2013



ՌՈՒՍԵՐԵՆ ՏՊԱԳՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

Անկախության շրջանում, որքան էլ ավելացավ հայկական հրատարակչությունների թիվը և որքան էլ դրանք փորձեցին բավարարել հայաստանյան ընթերցողի պահանջները, այնուամենայնիվ, գրաշուկայում առ այսօր գերակշռող է այլ լեզուներից ռուսերեն արված թարգմանությունների ներկրումը: Խնդիրն առաջին հերթին հայերեն թարգմանական ռեսուրսների սակավությունն է: Բացի այդ, հայ ընթերցողը տարիներ շարունակ սովոր էր ոչ միայն ռուս գրականությունը, այլև այլ լեզուներով ստեղծվող գրականությունն ընթերցել ռուսերեն կատարված թարգմանությունների օգնությամբ, ինչի հետևանքով ձևավորվել է կարծրատիպ, ըստ որի՝ ռուսերեն թարգմանություններն ավելի լավն են: Անշուշտ, այս մոտեցումն ունի օբյեկտիվ կողմ, քանի որ ռուսերեն ընթերցելու դեպքում ընթերցողը առնչվում է անմիջական, ոչ թե միջնորդավորված թարգմանության:

Գեղարվեստական ստեղծագործությունների առումով եթե քննության առնենք խնդիրը, ապա տեսանելի է, որ համաշխարհային դասական գրողների հիմնականում առանցքային ստեղծագործություններն են թարգմանված հայերեն. այդ հեղինակների մյուս ստեղծագործությունները, որոնք պետք է ամբողջացնեն հեղինակի ստեղծագործական նկարագիրը, մեզանում բացակայում է: Ընթերցողին այլ բան չի մնում անելու, քան այն, որ այդ ստեղծագործությունները որոնի ռուսերենով:

Մյուս կողմից՝ հաճախ անտեսվում է տվյալ ստեղծագործության հայերեն թարգմանությունը մի քանի այլ պատճառներով: Շատ հաճախ մեզանում շատ արժեքավոր ստեղծագործություններ հրատարակվել են շատ վատ ապրանքային տեսքով ու անշուք: Որպես օրինակ կարելի է բերել՝ «Ապոլոն» և «Լուսաբաց» հրատարակչությունների հրատարակած թարգմանական գրքերը: Ընթերցողն ավելի հաճախ ցանկանում է, որ իր նախընտրած ստեղծագործությունների ապրանքային տեսքը ևս պատշաճ լինի: Այս առումով Ռուսաստանից ներկրված գրքերը հաճախ զգալիորեն տարբերվում են Հայաստանի հրատարակչությունների մատուցածներից:

Կան հոգեբանական այլ նախապայմաններ ևս, որոնք ընթերցողին կողմորոշում են ռուսերենով ընթերցելուն: Նույնիսկ ոչ ակտիվ ընթերցողները նախապատվությունը հաճախ տալիս են ռուսերեն գրքին սոսկ այն պատճառով, որ այն տպավորությունը կա, թե ռուսերենով ընթերցողը հնարավորություն ունի ավելի շատ լավ ու ավելի մեծ ընտրությամբ ընթերցելու: Այս մոտեցումն, անշուշտ, ունի ճշմարտության իր բաժինը, սակայն այն մեծամասամբ կիրառվում է ավելի խելացի ու ավելի կարդացած երևալու համար: Եթե դիտարկում ենք հայերենով հայ և համաշխարհային գրականության տպագրման հարաբերությունը, ապա նկատում ենք, որ թարգմանական գրականությանը բաժին է ընկնում տասը տոկոսից էլ քիչ: Սա ստեղծում է այն տպավորությունը, որ հայերենով չի կարելի հաղորդակցվել համաշխարհային գրականությանն ու երևույթներին և որ հայերենով կարելի է հաղորդակցվել լոկ լոկալ բնույթի խնդիրների: Կարճ ասած՝

համաշխարհային գրականություն չի կարելի ոտք դնել հայերենով և իմանալ պահանջվածը:

Մասնագիտական գրքերի պարագայում ռուսերեն թարգմանություններին նախապատվություն տալն ունի մի շարք հիմնավոր պատճառներ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է դրանց հայերեն համարժեքների բացակայությանը: Թե՛ հասարակական, թե՛ բնական գիտությունների ոլորտում հայերենով հրատարակվող գրքեր գրեթե չկան: Հայերենով առավելապես տպագրվում է հայագիտությանը վերաբերող գրականություն: Բժշկության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի և գիտության այլ ոլորտներին վերաբերող հայերեն գրքերի բացակայությունը ստիպում է, որ նախապատվությունը տրվի ռուսերենին, ինչը հետագայում մասնագետներին ստիպում է լիովին փոխել իրենց ընթերցելու, երբեմն էլ, աշխատանքային միջավայրում, նաև՝ հաղորդակցվելու լեզուն: Հայերենով մասնագիտական գրքերի բացը ոմանք փորձում են լրացնել այլ լեզուներից ոչ թե ուղղակի հայերեն թարգմանելու, այլ այլ լեզուներով նմանատիպ աշխատանքների «յուրացմամբ»՝ որպես սեփական աշխատանք ներկայացնելով: Ինչ խոսք, այս մոտեցումը զցում է հայերենով հրամցվող մասնագիտական, ուսումնական գրքերի վարկանիշը, և օգտվողը նախապատվությունը տալիս է ռուսերեն գրքերին: Հայերենով մասնագիտական գրքերի երկարատև բացակայությունը բացասաբար է անդրադարձել նաև հայերենի բառամթերքի վրա: Մինչ օրս հայերենը մեխանիկական շատ երևույթների ու հասկացությունների բառային համարժեքը չունի, ինչը ևս պատճառ է այդ երևույթների մասին գիտական աշխատանքները ռուսերենով կարդալուն:

ԳՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հատկապես անկախության առաջին տարիներին թարգմանությունները կատարվում էին շատ կամայական, ինչը լավագույնս ցույց է տալիս Հայաստանում թարգմանիչների սոցիալական, հասարակական դիրքի մասին: Սկսված այն պահից, երբ առանձին հրատարակչություններ մշակեցին հատուկ թարգմանական հայեցակարգ, թարգմանիչների սոցիալական դիրքը սկսեց դրական տեղաշարժերի միտում ունենալ: Այն, որ թարգմանական ռեսուրսները սակավ են Հայաստանում, պատճառ է դառնում նրան, որ հաճախ ոչ պատրաստված ու բավարար կրթությամբ թարգմանիչները գործունեության ասպարեզ են ունենում: Կան նաև որոշ լեզուներ, ինչպիսիք են, օրինակ՝ շվեդերենը, նորվեգերենը, որոնց ամբողջ հանրապետությունում տիրապետում է մեկ-երկու հոգի. այսինքն՝ նմանատիպ լեզուներից թարգմանիչները չունեն համապատասխան թարգմանական խմբագիրներ, ինչը կարող է հետևանք դառնալ թարգմանիչների անբարեխղճության: Այս խնդիրները հաշվի առնելով, կարելի է նկատել, որ Հայաստանում լավ կրթությամբ, բարձր պատրաստվածությամբ թարգմանիչները սակավ են: Օրինակ՝ մեզանում գրեթե բացակայում են այն դեպքերը, երբ լուրջ քննության է ենթարկվում թարգմանչի թարգմանական աշխատանքը: Ավելի շատ շեշտը դրվում է թարգմանված գործի հեղինակության ու ճանաչված կամ ոչ ճանաչված լինելու վրա: Հրատարակիչներն էլ հաճախ հենց այս փաստն են հաշվի առնում, և ոչ թե թարգմանության որակը: Օրինակ՝ «Գիտանք» հրատարակչությունն

այսօր էլ կատարում է միջնորդավորված թարգմանություններ, նույնիսկ այն դեպքում, երբ այդ թարգմանությունները ֆինանսավորվում են համապատասխան երկրների թարգմանությունների աջակցման և տարածման ֆոնդերի կողմից, ձեռք են բերվում հեղինակային իրավունքները, որոնց պարտադիր պայմաններից մեկն էլ ստեղծագործության բնագիր լեզվից թարգմանությունը կատարելն է: Թարգմանվում են տարբեր լեզուներով ստեղծագործություններ (նորվեգերեն, դանիերեն, ֆիններեն, ճապոներեն և այլն) միայն անգլերենի, ֆրանսերենի և ռուսերենի միջնորդությամբ: Ճիշտ է, այդ ամենը կատարվում է տվյալ ստեղծագործության հեղինակային իրավունքների սահմաններում, այսինքն՝ նախապես ձեռք բերված համաձայնությամբ, բայց այստեղ թարգմանական որակի մասին խոսելն անիմաստ է, մյուս կողմից՝ այս կերպ արգելակվում է թարգմանական գործում նոր լեզուներ ներգրավելու հարցը:

Բուհերում լավ կրթություն ստացած շատ անհատներ պարզապես հրաժարվում են գեղարվեստական կամ այլ տիպի գրավոր թարգմանություններից՝ նմանատիպ թարգմանությունները համարելով անշահութաբեր: Նման պարագայում առաջնային խնդիր է դառնում գրական դաշտում լավ թարգմանիչների առկայությունը: Թարգմանիչների սոցիալական դիրքի բարձրացման, նրանց աշխատանքի նշանակության գնահատմանը գործում մեծ դեր ունեն հրատարակչությունների բարեխիղճ աշխատանքը, պետական հատուկ թարգմանական ծրագրերի կենսագործումը:

Նշելով, որ թարգմանական աշխատանքները մեզանում ավելի հաճախ կատարվում են կամայականորեն, ոչ ծրագրավորված ու հատուկ հայեցակարգով, պետք է շեշտել, որ նման պարագայում թարգմանիչների

աշխատանքային պայմանների մասին խոսելն ավելորդ է և դուրս է հեղինակ-հրատարակիչ-թարգմանիչ շղթայից, որը պետք է ապահովեր աշխատանքային նորմալ պայմաններ: Հեղինակային իրավունքների հաճախակի խախտումները առիթ են հանդիսանում, որ մեկ ստեղծագործության պարագայում ունենում ենք միաժամանակ մի քանի թարգմանություններ: Ցայտուն օրինակ է 2013-ին հայաստանյան երեք հրատարակությունների կողմից առանց հեղինակային իրավունքների ձեռքբերման հրատարակված Աքրամ Այլիսլիի «Քարե երազներ» ստեղծագործությունը:

Նման աշխատանքային պայմաններն, անշուշտ, աննպաստ են թարգմանիչներին սեփական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար և աննպաստ է սակավ ռեսուրսներով հայաստանյան գրաշուկայի ճիշտ կազմակերպմանը:

Հաճախ թարգմանիչները հրատարակիչների հետ հարաբերվելիս չեն տիրապետում սեփական իրավունքներին, որը պայմաններ է ստեղծում, որպեսզի հրատարակիչները դրանք շահագործեն: Հաճախ կամայականորեն թարգմանիչները սկսում են թարգմանել այնպիսի հեղինակների, որոնց հեղինակային իրավունքը պատկանում է մի հրատարակչության, որի հետ պայմանագրային ոչ մի պարտավորություն չունեն և ստիպված են լինում իրենց թարգմանությունները վաճառել շատ էժան գնով: Շատ քիչ են այն դեպքերը, երբ հրատարակիչն ու թարգմանիչը նախապես համաձայնվածությամբ աշխատում են որևէ երկի թարգմանության վրա: Այդ առումով Հայաստանում առանձնանում են համեմատաբար «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», «Անտարես», «Զանգակ», «Ակտուալ արվեստ» հրատարակչությունները:

Մյուս դեպքերում՝ հիմնականում թարգմանիչն ինքն է ինքնուրույն որոշում իր թարգմանելիքը, որը մեծամասամբ հետագայում խնդիրներ է առաջացնում թարգմանիչի համար: Պատահում են դեպքեր, որ թարգմանված գործը անօրինական հայտնվում է գրաշուկայում, և թարգմանիչը կարճ ժամանակ անց ստիպված է լինում դրանք «մաքրել» շուկայից՝ ճանապարհ տալով օրինականին:

Հայաստանում նոր կյանք առնող գրական գործակալությունները, մասնավորապես՝ 1-ին գրական գործակալությունը պետք է ուշադրություն դարձնեն թարգմանիչների աշխատանքային պայմաններին: Այդ գործակալությունները պետք է թարգմանիչներին իրազեկեն իրենց իրավունքների մասին և լավագույնս փորձեն կանոնակարգել թարգմանական գործը, այլ պարագայում թարգմանական գործը վերածվում է ինքնաբավ աշխատանքի կամ հաճախ հրատարակվում են թարգմանական գործեր, որոնց հայտնությունը գրաշուկայում անօրինական է:

Հրատարակիչները ևս պետք է հետևողական լինեն թարգմանիչների աշխատանքին: Նրանք պետք է կոնկրետ հանձնարարություններով հանդես գան թարգմանիչների առջև, այլ ոչ թե սպասեն, թե տվյալ թարգմանիչն ինչ կմատուցի իրենց և արդյոք այդ մատուցածը նպատակահարմար է հրատարակելը, թե ոչ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

- Նախևառաջ՝ նմանատիպ ուսումնասիրությունները հետազայում ավելի համակողմանիորեն ու ստույգ կատարելու համար անհրաժեշտ է, որ նախ՝ հրատարակիչներն իրենք բարեխղճորեն թարգմանությանը վերաբերող տվյալներն արտացոլեն գրքում, և ապա՝ համապատասխան վիճակագրություն կազմողները դրանք արտացոլեն ցանկերում:
- Բուհերում, հատկապես բնական գիտությունների ոլորտում, ոչ թե խրախուսել դասախոսական անձնակազմի դասագրքեր հրամցնելը, որոնք հիմնականում այլ լեզուներով հրատարակված նմանատիպ աշխատանքների յուրացումներ են, այլև հովանավորել տվյալ ոլորտներում միջազգային ճանաչում ստացած աշխատությունների թարգմանությունը՝ ըստ անհրաժեշտության:
- Հրատարակչությունները սեփական թարգմանությունները ապահովելու համար ոչ միայն պետք է որոնեն պատրաստի թարգմանիչների, այլ նաև իրենք պետք է թարգմանիչներին տարբեր լեզուներ սովորելու դասընթացների ուղարկեն, որպեսզի նաև վստահ լինեն իրենց մատուցվող թարգմանությունների որակին:
- Թարգմանիչների համար կազմակերպել իրենց իրավունքների ճանաչման դասընթացներ, ինչպես նաև թարգմանվելիք գործի պարագայում հետագա իրավական խնդիրների ծանուցում:

- Դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունները պետք է ավելի հետևողական լինեն և պարբերաբար հետևեն, թե ի՞նչ ճակատագիր են ունենում իրենց կողմից ֆինանսավորվող գրքերը, տպագրվում են արդյոք ամբողջովին, բնագրի՞ց են թարգմանվում և այլն:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Անփարես» հրատարակչության տնօրեն

Այս ուսումնասիրությանը ծանոթանալուց հետո ամենակարևոր եզրահանգումը, որ կարելի է անել, այն է, թե ուր ենք հասել մենք, ուր ենք գնում, ինչ ենք ուզում: Հստակվում է մի բան, որ վաղուց կարծես թե պետք է քննարկվեր. արդյոք խմբագրությունը կարելի՞ է հրատարակչություն կոչել, կամ ի՞նչ է նշանակում հրատարակիչ ընդհանրապես: Այսօր Հայաստանում ով հասցնում է, դառնում է հրատարակիչ՝ գրախանութներն են հրատարակիչ, թարգմանիչն է հրատարակիչ, պետությունն է հրատարակիչ... Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդ ամենը պետք է տարանջատել: Իմ կարծիքով՝ հրատարակիչը պրոդյուսեր է, պատասխանատու անձ գրքի ստեղծման բնագավառում: Եվ ով այդ պատասխանատվությունը չի կրում, չի կարող կոչվել հրատարակիչ:

Մենք նաև տեսնում ենք, թե ինչ մեծ ազդեցություն կարող են ունենալ ճիշտ մեխանիզմները:

Խորհրդային հասարակարգում տիրող մտայնություններով պայմանավորված երկար ժամանակ ու անկախության առաջին տասնամյակում Հայաստանում տիրապետող թարգմանական լեզուն ռուսերենն էր, այսօր, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության մեջ առկա տվյալները, աստիճանաբար նման լեզու է դառնում անգլերենը: Մենք հավանաբար սա չէինք ուզում, մենք ուզում էինք, որ հայերեն թարգմանությունները կատարվեն բնագիր լեզուներից: Եվ այդ ուղղությամբ պետք է աշխատել: Համաշխարհային

բոլոր լեզուներով ստեղծված գոնե լավագույն գրական գործերը պետք է թարգմանել հայերեն:

Մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ մենք 22 տարում ունենք 32 լեզվից թարգմանություն, լավ է: Եվ կապ չունի, որ այդ լեզուներից շատերը արձանագրված են մեկ, երկու, վեց, յոթ, մյուսները՝ 60, 100, 500 թարգմանությամբ: Լեզուն կամուրջ է, բարեկամության կամուրջ, և մեկ թարգմանությունն անգամ հարաբերվելու, շփվելու առիթ է ստեղծում, իսկ հետագայում՝ որքան շատ թարգմանություններ, այնքան շատ շփում, այնքան շատ փոխճանաչում և հարաբերությունների սերտացում: Իսկ մեր մշակույթն ունի այլ մշակույթների հետ շփվել-հարաբերվելու ամենաբազմազան հնարավորություններ:

Ինչ վերաբերում է դրամաշնորհներին, որոնք ըստ հետազոտության՝ այսօր բավական մեծ դերակատարում ունեն Հայաստանում թարգմանական գործի տեսանկյունից, ապա կարծում եմ՝ շատ կարևոր է, որ հրատարակիչները, այսպես ասած՝ զոհ չգնան դրամաշնորհներին, այսինքն՝ չթարգմանեն այն, ինչ դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններն են պարտադրում: Այն հրատարակիչը, որը պատրաստ չէ աշխատել դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունների հետ, անպայման կընկնի ծուղակը և կսկսի օգտագործվել նրանց կողմից: Մյուս կողմից՝ դրամաշնորհը գայթակղություն է, և շատերն են գայթակղվում՝ չգիտակցելով, որ դառնում են զոհ:

Իսկ այն հրատարակիչները, որոնք ունեն հստակ ծրագրեր, և այսպես թե այնպես, թարգմանելու և հրատարակելու էին կոնկրետ հեղինակների կոնկրետ ստեղծագործություններ, նրանց դեպքում դրամաշնորհները իսկապես կարող են անգնահատելի դեր

կատարել՝ խթանելով ոչ թե թարգմանությունը պարզապես, այլ թարգմանությունն իբրև մշակութային իրողություն:

Կատարված ուսումնասիրությունը պարունակում է չափազանց խիտ ու բովանդակալից տեղեկատվություն և կարող է շատ հարցերում ուղենշային լինել ոչ միայն Հայաստանում թարգմանական գործի կազմակերպման, այլև ընդհանրապես հրատարակչական գործի համար, որովհետև գրեթե հստակ պատասխանում է այն հարցերին, թե ինչ ունենք, և ինչ պետք է անենք: